

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Պուրովինայի հետաքրքրական ազգայնութեանց մէջ ստուգիւ ամենակարեւոր դիրքն ունին Արեւելեան Հայք:

Գործոյս մէջ ջանացի նոյն ազգին եւ անոր եկեղեցւոյն վերաբերեալ ամէն պատմական նիւթերն հաւաքել, — որ ոչինչ նուազ դժուարութիւն ունէր, վասն զի մինչեւ ցայսօր ոչ ոք ի մասնաւորի այս ազգին պատմութիւնն հետազօտած է. — նոյնպէս ջանացի այս ազգին պատմութեան եւ կրօնին վերաբերեալ սխալ կարծիքներն ուղղել, եկեղեցական եւ աշխարհական անձանօթ կարգ ու սովորութիւններն ամէնուն ծանօթացընել, եւ շատ քան մոռացութեան ձեռքէն ազատել եւ ապագայ սերնդեան աւանդել:

Կը խոստովանիմ, որ գործոյս մէջ շատ քաներու վրայ մանրամասն եւ ճշդագոյնս պէտք էր գրել, սակայն կրնամ յար-